ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Սովորողների ուսումնական առաջադիմության գնահատման նպատակները, սկզբունքները, ձևերն ու տեսակները»

ԱՌԱՐԿԱ՝ Անգլերեն

ՀԵՂԻՆԱԿ՝ Անի Հովհաննիսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Սիսիանի հ. 1 հիմնական դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. Խաչատրյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 4
ԳԼՈՒԽ 1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ...5
ԳԼՈՒԽ 2. ԸՆԹԱՑԻԿ (ՁԵՎԱՎՈՐՈՂ) ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ 7
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 7
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 12
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 13
ՀԱՎԵԼՎԱԾ. ԴԱՍԻ ՊԼԱՆՆԵՐ.....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովորողների գիտելիքների, հմտությունների ստուգման նպատակով կատարվում է գնահատում՝ միավորային (ամփոփիչ) և ուսուցանող: Միավորային գնահատումը կիրառվում է թեմայի յուրացման աստիճանը ստուգելիս և պարտադիր գրանցվում է: Ուսուցանող գնահատման դեպքում գնահատականը չի գրանցվում, ուսուցչի կողմից արվում են դիտողություններ, առաջարկություններ թեմայի յուրացման վերաբերյալ:

Գնահատումը կարևոր տեղ է զբաղեցնում մանկավարժության մեջ, քանի որ գնահատելու հմտությունը մանկավարժների մասնագիտական վարպետության կարևոր չափանիշներից է: Հատկապես ձևավորող գնահատման հետ կապված մանկավարժների մոտ կան որոշ թյուր պատկերացումներ. անհրաժեշտ է փոխել նրանց, ծնողների և սովորողների պատկերացումները գնահատման մասին, որպեսզի բարելավվի ուսումնական գործընթացը և մեծանա սովորողների մոտիվացիան:

Հետազոտական աշխատանքի թեման է «Սովորողների ուսումնական առաջադիմության գնահատման նպատակները, սկզբունքները, ձևերն ու տեսակները»:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է գնահատման համակարգի փոփոխություններով, ստուգման ժամանակակից մեթոդներով, որոնք միտված են կրթության որակի բարելավմանը, ուսուցման և ուսումնառության բարելավմանը, սովորողների՝ գնահատման գործընթացում ներգրավվածությանը, ընթացիկ գնահատման գործիքներ կիրառելուն, աշակերտների գիտելիքների և հմտությունների ստուգման ու գնահատման նոր մեթոդներին, ինչպես նաև նրանց առաջադիմությունը բարձրացնելուն:

Աշխատանքի **նպատակն է** ուսումնասիրել ընթացիկ գնահատման վերաբերյալ գրականությունը, ինչպես նաև ընթացիկ գնահատման ձևերը, տեսակներն ու գործիքները և դրանց դերը ուսումնառության գործընթացում:

Ըստ նպատակի՝ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. ուսումնասիրել ուսումնառության արդյունքների գնահատման տեսակներն ու ձևերը,
2. բացահայտել ուսումնառության արդյունքների ընթացիկ գնահատմանը ներկայացվող պահանջները,
3. իրականացնել ուսումնառության արդյունքների ընթացիկ գնահատման կիրառումը դասապրոցեսում,

4. վերլուծել և ներկայացնել ընթացիկ գնահատման գործիքների դերը ուսումնառության գործընթացում:

Գրական ակնարկ

Տարբեր հեղինակների մոտ, ինչպես նաև տարբեր աղբյուրներում հանդիպում են գնահատման տարբեր սահմանումներ:

Հանրակրթության պետական չափորոշչում տրվում է գնահատման հետևյալ սահմանումը. «Գնահատումն ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է» [1]:

Հանրակրթության նոր չափորոշչում գնահատումը սահմանվում է այս կերպ. «Ուսումնառության արդյունքների գնահատումը որոշում է սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների մակարդակի» [2]:

Գնահատման հիմնական նպատակն է սովորողի գիտելիքների մակարդակի, կարողությունների ու հմտությունների տիրապետման ստուգումը, արժեքային որակների ձևավորման ապահովումը և դրանց հիման վրա ուսումնական գործընթացի արդյունավետության, ուսման որակի բացահայտումն ու վերահսկումը [Արնաուդյան, Գյուլբուդաղյան 2004:110]:

Գնահատման գործառույթները չեն սահմանափակվում միայն ուսուցման մակարդակի արձանագրմամբ: Գնահատականը ուսուցման խթանման միակ միջոցն է: Օբյեկտիվ գնահատման ազդեցությամբ է սովորողների մոտ ձևավորվում համարժեք ինքնագնահատական, քննադատական վերաբերմունք սեփական հաջողությունների նկատմամբ [Պոդլասի 1999:548]:

Գնահատումը տեղեկատվություն ստանալու, հավաքելու, կուտակելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության իրականացման բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է [Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն]:

Գնահատականի նպատակն է հետադարձ կապ հաստատել ուսուցչի և աշակերտի միջև, աշակերտին մոտիվացնել, զարգացնել սովորելու և ինքնակատարելագործվելու ձգտումը: Ցանկացած գնահատական՝ դրական, թե բացասական, աշակերտի գործունեության և վարքի խթան է հանդիսանում [6]:

Գնահատման հիմնական նպատակն է նպաստել սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձեռքբերմանը, դրանց շարունակական

զարգացմանը, ուսումնական գործընթացի կատարելագործմանը, ուսման որակի բացահայտմանն ու վերահսկմանը: Գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանն ու ինքնազարգացմանը [Միքայելյան 2010:24]:

ԳԼՈՒԽ 1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ

Գնահատման նոր համակարգը ներդրվեց կրթության որակն արմատապես բարելավելու, սովորողի ուսումնական գործընթացը խթանելու և շարունակական զարգացում ապահովելու նպատակով:

Գնահատման նոր համակարգի նորությունն այն է, որ գործածվում է գնահատման տասը միավորային սանդղակը, որի յուրաքանչյուր թվանշան նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ: Ճիշտ է՝ անցողիկ են համարվում չորս և ավելի գնահատականները, բայց մեկից մինչև երեք թվանշանները նույնպես համարվում են բավարար գնահատական, քանի որ կիսամյակային գնահատականի ձևավորման համար յուրաքանչյուր թվանշան կարևոր է:

Գնահատումը հիմնված է մի շարք սկզբունքների վրա, օրինակ՝ արդարություն, հուսալիություն, անկողմնակալություն, հավաստիություն, հիմնավորվածություն, մատչելիություն, թափանցիկություն, համադրելիությունը միջազգայնորեն ընդունված գնահատման չափանիշներին [Արնաուդյան, Գյուլբուդաղյան 2004:110]:

Ուսումնառության ընթացքում իրականացվող գնահատումը ընթացիկ գնահատում է, կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին իրականացվում է ամփոփիչ գնահատում:

Ընթացիկ գնահատման համակարգի նպատակներն են.

ա. ճշգրտել սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի ծավալը, բովանդակությունը, ինչպես նաև խթանել նրա ուսումնական ակտիվությունը,

բ. հայտորոշել ուսուցման ընթացքն ու վերջնարդյունքները,

գ. շաղկապել ուսուցումը և ուսումնառությունը,

դ. փոխադարձ կապ հաստատել սովորողի ու նրա ծնողի հետ,

ե. սովորողի առաջադիմության ընթացքը համեմատել մեկնարկային վիճակի հետ,

զ. վերահսկել ուսուցման գործընթացն ու արդյունքները [Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն]:

Դպրոցներում գոյություն ունի սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման երկու հիմնական ձև՝ ուսուցանող (ձևավորող) գնահատում և միավորային (ամփոփիչ) գնահատում [9]:

Ուսուցանող (ձևավորող) գնահատումն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու, ուսուցիչն առաջարկություններ, դիտողություններ կամ մեկնաբանություններ է անում նյութի յուրացման կամ առաջադրանքի կատարման վերաբերյալ [Միքայելյան 2010:26]:

Ամփոփիչ միավորային գնահատմամբ ստուգվում է սովորողի՝ ամբողջական թեմայի յուրացման աստիճանը, իսկ գնահատականը գրանցվում է:

Քանի որ «գնահատում» բառն առաջացել է 'assidere' բառից, որ նշանակում է «կողքին նստել», դա ենթադրում է, որ գնահատման ժամանակ անհրաժեշտ է ուսուցչի և աշակերտի համատեղ աշխատանք, համագործակցություն [Բոյլ, Չարլզ 2013:34]:

Գնահատում անհրաժեշտ է իրականացնել աշակերտի ուսումնական կարիքները բացահայտելու և դրանց արձագանքելու նպատակով, այսինքն՝ գնահատումը պետք է լինի «ձևավորող»: Այն օգնում է աշակերտին բարձր ցուցանիշներ ապահովել. արդյունավետ է աշակերտների առաջադիմությունը բարձրացնելու նպատակով: Ձևավորող գնահատականի միջոցով ձևավորվում են «սովորել սովորելու» հմտությունները, շեշտադրվում է դասավանդման և ուսումնառության գործընթացը, որում ներգրավվում են նաև սովորողները: Զարգանում են դասընկերներին գնահատելու (փոխադարձ գնահատում) և ինքնագնահատման հմտություններ [Բոյլ, Չարլզ 2013:6]:

«Ձևավորող գնահատումը կատարվում է ամեն օր և թույլ է տալիս ուսուցչին և սովորողին համապատասխան փոփոխություն կատարել իրենց գործողություններում՝ ելնելով տվյալ ուսումնական միջավայրից» [Բոյլ, Չարլզ 2013:9]:

Սովորողները զարգանում են անընդհատ, ոչ միայն քառորդի կամ տարվա վերջում: Հետևաբար, եթե գնահատումը լինում է ընդհատումներով, ապա այն չի կարող համարվել ուսմանը նպաստող՝ ձևավորող միջոց [Բոյլ, Չարլզ 2013:36]:

Ուսուցանող (ձևավորող) գնահատման միջոցով բացահայտվում է, թե ինչպես է սովորողը յուրացրել ուսումնական նյութը որոշակի ժամանակահատվածում, ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը, ինչպես նաև կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումն է հետադարձ կապի կիրառման միջոցով: Վերջինս նպաստում է դասավանդման և ուսումնառության ընթացքում առաջացած թերությունների շտկմանը մեկնաբանությունների և վերլուծությունների միջոցով: Հետևաբար, գնահատման այս ձևում կարևորվում է հետադարձ կապը [Միքայելյան 2010:27]:

ԳԼՈՒԽ 2. ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Գնահատումը կարևոր է թե՛ ուսուցիչների, թե՛ սովորողների համար, քանի որ դրա միջոցով տեղեկատվություն է ստացվում սովորողի ուսումնառության, ուսուցման և դասավանդման մասին: Տեղեկության աղբյուր են հանդիսանում գրավոր թեստերը, տնային աշխատանքները, բանավոր հարցումները, կիսամյակային գրավոր աշխատանքները [Միքայելյան 2010:5]:

Անհրաժեշտ է, որ ուսուցիչները աշակերտի արձանագրած առաջընթացը չափելուց բացի բացահայտեն նաև նրանց ուսումնական կարիքները, արձագանքեն դրանց: Սովորողի առաջադիմության ստուգման ձևեր են թեստերը, քննությունները, սակայն սովորողի ուսումնական կարիքները պարզելու և դրանք արձանագրելու համար անհրաժեշտ է իրականացնել ձևավորող գնահատում:

Ուսուցիչները կարևորում են ձևավորող գնահատումը, քանի որ այն օգնում է պարզել, թե ինչ գիտեն սովորողները, այսինքն՝ բացահայտվում է աշակերտների կարիքները: Ուսուցիչներն արձանագրում են դրանց և հետադարձ կապ տրամադրում սովորողներին:

Ձևավորող գնահատման գործիքները շատ են: Մենք ուսումնասիրության ենք ենթարկել հետադարձ կապը, հայտորոշիչ գնահատումը, ինքնագնահատումը, փոխադարձ գնահատումը:

Հետազոտությունը կատարվել է վերոնշյալ գործիքների ուսումնասիրմամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մենք ուսումնասիրեցինք գնահատման, գնահատման ձևերի և գործիքների մասին տեսական նյութը և կատարեցինք հետազոտություն ձևավորող գնահատման գործիքների կիրառմամբ: Հետազոտության համար ընտրվեց 5-րդ դասարանը:

Մենք նպատակ ունեինք նախնական պատկերացում կազմել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, հմտությունների զարգացման և վերաբերմունքի ձևավորման առկա մակարդակի մասին: Այդ իսկ պատճառով նախնական հայտորոշումը կատարվեց նոր ուսումնական տարվա սկզբում: Հետազոտության համար մշակվեց բարդության տարբեր աստիճան ունեցող հարցերից կազմված հայտորոշիչ թեստ, որն ուղղված էր

դասարանի բոլոր սովորողներին: Թեստը մշակելիս մենք ուշադրություն դարձրինք նաև թեստի հատկորոշիչներին:

Ճիշտ է, դասարանում սովորողների մեծ մասն ունի գերազանց առաջադիմություն, սակայն հայտորոշիչ թեստի արդյունքներն այնքան էլ գոհացնող չէին: Հայտորոշումն ինձ հնարավորություն տվեց պատկերացում կազմել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների մակարդակի մասին և հետագա քայլերս պլանավորել: Քերականական նյութը նորից բացատրելուց, բազմաթիվ վարժություններ գրելուց, բանավոր խոսքում կիրառելուց հետո կազմեցի թեստ, որը սովորողները բավականին հաջող լրացրեցին:

Ուսումնառության մեջ հնարավոր է հասնել բարձր արդյունքների, եթե սովորողը ճիշտ պատկերացումներ ունենա ուսումնական նյութի իր իմացության մակարդակի վերաբերյալ և կարողանա վերացնել թերությունները: Այդ նպատակներին է ծառայում ինքնագնահատման կանոնավոր կիրառումը ուսման բոլոր փուլերում:

Դասերից մեկի համար կազմեցի ինքնագնահատման թեստ՝ ստուգելու սովորողների կարողություններն ու հմտությունները տեքստային առաջադրանքներ կատարելու համար: Սովորողները ընթերցեցին տեքստը, դուրս գրեցին ածականները, գրեցին դրանց հոմանիշներն ու հականիշները, կատարեցին տեքստին հաջորդող առաջադրանքները:

Ինքնագնահատման թեստ

Կարդա՛ ու գնահատի՛ ր քո հմտությունները տրված չափանիշներով

(Յուրաքանչյուր կետի համապատասխան վանդակում նշել պատասխանը՝ օգտագործելով ստորև ներկայացված նշանային համակարգը):

+ կարող եմ
V լավ չեմ կարող (*միշտ չէ, որ կարող եմ, մասամբ կարող եմ*)
? վստահ չեմ, որ կարող եմ
- չեմ կարող

1. Արագ կարդալ տեքստը և գտնել պահանջվող տեղեկատվությունը: ☐
2. Հասկանալ պարզ, հստակ ձևակերպված հարցը: ☐
3. Տեքստից դուրս գրել հոմանիշները: ☐
4. Տեքստից դուրս գրել հականիշները: ☐
5. Հայտնել և հիմնավորել կարծիք տեքստի կարևոր մտքի մասին: ☐
6. Պատասխանել տեքստի շուրջ հարցերին՝ օգտագործելով այլ առարկաներից ստացած գիտելիքները: ☐
7. Ինքնուրույն պատասխանել տեքստի շուրջ հարցերին: ☐

Դասերից մեկի ժամանակ սովորողներին հանձնարարեցի կարդալ փոքրիկ տեքստը, այնուհետև լսեցին մասնագիտությունների մասին ձայնագրություն (https://www.youtube.com/watch?v=G5UHA2sf-IE), կատարեցին առաջադրանքներն ու դասի վերջում լրացրեցին ինքնագնահատման թերթիկ՝ գնահատելու սեփական գիտելիքներն ու հմտությունները: Արդյունքները բավականին գոհացնող էին, քանի որ սովորողների մեծ մասը հասկացել էր տեքստի բովանդակությունը, կարողացան թարգմանել այն, գիտեին մի քանի ածականի հոմանիշ-հականիշը: Ձայնագրությունը լսելուց հետո հանձնարարեցի գրել այն մասնագիտությունները, որոնք հնչեցին ձայնագրության մեջ: Սովորողների մի մասը տասը բառից հասկացել էր յոթ բառ, մի մասը՝ ութ բառ, իսկ մեծ մասը հասկացել էր ինը բառ: Նշանակում է՝ սովորողները կարողանում են ունկնդրման վարժություններ կատարել, հասկանալ լսած բառերը:

A self-assessment tool

Do you understand the text?	Yes No
How many words do you understand?	1, 2, 3, 4 …..10
Write the words you hear	

Թեմայի ավարտին սովորողներին տվեցի ինքնանդրադարձի թերթիկներ, որը նրանք ոգևորությամբ լրացրեցին, նշեցին իրենց ուժեղ և թույլ կողմերը, ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները: Նրանք հարցերին տարբեր պատասխաններ տվեցին: Մի մասի համար դժվար էր անկանոն ածականների, մյուսների համար դժվարություն էր ներկայացնում բազմավանկ ածականների համեմատության աստիճանները:

Self-reflection

1.What new things did you learn?	
2.What information was more interesting?	
3.What was the most difficult and why?	

Թեմայի ավարտին ամփոփիչ գնահատման ժամանակ ապահովվել են գնահատման սկզբունքները: Սովորողների համար իրենց գնահատականը եղել է հուսալի, հավաստի և արդար: Ժամանակին ապահովվել է հետադարձ կապ, սովորողները գնահատել են իրենց ուժող և թույլ կողմերը, ձեռքբերումներն ու թերությունները: Դրանք վերլուծել ենք

և հետադարձ կապի միջոցով նրանց հետագա ուսումնառությանը նպաստող ինֆորմացիա տվել: Արդյունավետ հետադարձ կապ ապահովելու համար պահպանվել են հետադարձ կապի սկզբունքները՝ անհատական, օբյեկտիվ և նրբանկատ, ճիշտ, տեղին և ժամանակին, կարճ և հետաքրքիր:

Հետադարձ կապը իրականացվեց բանավոր զրույցի միջոցով, վերլուծություններն ու շտկումները կատարվեցին բանավոր քննարկման միջոցով, որի ժամանակ քննարկվեցին այն գործողությունները, որոնք բարելավման կարիք ունեն:

Սովորողների համար հետաքրքիր գործիք է նաև փոխադարձ գնահատումը. ընտրեցինք սովորողը սովորողին տարբերակը: Սովորողները դրսևորեցին դասընկերոջ սխալը տեսնելու, ճիշտ պատասխանը հիմնավորելու կարողություն, ընկերոջը օգնելու պատրաստակամություն: Փոխադարձ գնահատման միջոցով սովորողները տեղեկացան իրենց աշխատանքի ուժեղ և թույլ կողմերի, սխալների մասին: Անհրաժեշտության դեպքում նրանք ստացան նաև լրացուցիչ առաջադրանքներ և հանձնարարություններ՝ բացթողումները լրացնելու համար:

Հետազոտության շրջանակում մենք որոշեցինք ուսումնասիրություն կատարել նաև ուսուցիչների շրջանում՝ պարզելու, թե նրանք ինչ գիտեն գնահատման, գնահատման ձևերի, գործիքների մասին: Կազմվեց տասներկու հարցից բաղկացած հարցում գնահատման վերաբերյալ, որին մասնակցած ուսուցիչները տվեցին տարբեր պատասխաններ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը.

1. Գնահատումը կատարում է.

ա. բացառապես ուսուցիչը,

բ. սովորողը ինքն իրեն,

գ. սովորողը համադասարանցիներին,

դ. նշված բոլոր տարբերակները հնարավոր են:

Հարցմանը մասնակցած ուսուցիչների 25%-ը կարծում է, որ գնահատումը կատարում է բացառապես ուսուցիչը, իսկ 75%-ի կարծիքով գնահատումը կատարում են ուսուցիչը, սովորողը ինքն իրեն (ինքնագնահատում), սովորողը համադասարանցիներին (փոխադարձ գնահատում):



2. Ձևավորող գնահատում կատարելիս գրանցվո՞ւմ է արդյոք գնահատականը.

ա. այո,

բ. ոչ,

գ. երբեմն,

դ. չգիտեմ

Հարցման մասնակիցների 20%-ը պատասխանել է՝ «այո», 55%-ը՝ «ոչ», իսկ 25%-ը կարծում է, որ երբեմն գրանցվում է:



3. Ձեր կարծիքով՝ նշվածներից ո՞րն է ձևավորող գնահատման գործիք:

ա. փոխադարձ գնահատում,

բ. ինքնագնահատում,

գ. ոչ մեկը, ոչ մյուսը,

դ. երկուսն էլ:

Հարցվածների 15%-ը պատասխանեց՝ փոխադարձ գնահատումը, 25%-ը՝ ո՛չ փոխադարձ գնահատումը, ո՛չ ինքնագնահատումը, իսկ 60%-ը՝ և՛ փոխադարձ գնահատումը, և՛ ինքնագնահատումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, կատարված հետազոտության արդյունքում ուսումնասիրվել և ներկայացվել են ընթացիկ գնահատման ձևերը, տեսակներն ու գործիքները և դրանց դերը ուսումնառության գործընթացում:

Գնահատման մասին մասնագիտական գրականության ուսումնասիրությունից և դասերի վերլուծությունից պարզ դարձավ, թե գնահատումը որքան կարևոր է և՛ դասավանդողի, և՛ սովորողի համար: Այն մոտիվացնում է սովորողին, նրա թերությունները և հաջողությունները վեր հանում, իսկ ուսուցչին ինֆորմացիա է տալիս սովորողի ընթացիկ ուսումնառության մասին և օգնում պլանավորել դասավանդումը:

Մենք ուսումնասիրեցինք ուսումնառության արդյունքների գնահատման տեսակներն ու ձևերը և կարող ենք ասել, որ ընթացիկ գնահատման գործիքները օգնում են իրականացնել գնահատում, ինչն էլ դասավանդման և ուսումնառության անբաժան մասն է:

Հետազոտական աշխատանքի շրջանակում իրականացրեցինք հետազոտական հարցում՝ պարզելու, թե ուսուցիչներն ինչ գիտեն գնահատման, գնահատման ձևերի և գործիքների մասին: Ամփոփելով ուսուցիչներին արված հարցման արդյունքները՝ եկանք մի եզրակացության, որ ոչ բոլոր ուսուցիչները գիտեն գնահատման, գնահատման ձևերի մասին, ոչ բոլորը գիտեն, որ գնահատման գործիքները նպաստում են սովորողների արդյունավետ ուսումնառությանը:

Այսպիսով, կարող ենք ասել, որ գնահատումը, գնահատման ձևերն ու գործիքները շատ կարևոր են դասավանդման և ուսումնառության մեջ, սակայն ուսուցիչների կողմից այդքան էլ շատ չեն կիրառվում, քանի որ ոչ բոլոր գործիքներն են հայտնի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան 2005
2. Արնաուդյան Ա. և ուրիշներ, Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, ԿԱԻ, Երևան 2004
3. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն, Երևան 2008
4. Հանրակրթության Պետական Կրթակարգ, Երևան 2004
5. Հանրակրթության Պետական Չափորոշիչ, Երևան 2021
6. Միջնակարգ Կրթության Պետական Չափորոշիչ, Երևան 2004
7. Միքայելյան Օ. Ս., Միքայելյան Ս. Օ., Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, Երևան 2010
8. Подласый И. П., Педагогика, Книга 1, М., Владос 1999.
9. Boyle B և Charles M (2013) Formative assessment for teaching and learning. SAGE publishers www.sagepub.com ISSN:976-1-4462-7332-6 (Բոյլ Բ. և Չարլզ Մ. (2013թ.). Ձևավորող գնահատում՝ հանուն դասավանդման և ուսումնառության), 2013

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=57923, 20.09.23; 20:35
2. Հանրակրթության պետական չափորոշիչ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788, 20.09.23; 20:40
3. «ԿՁՆԱԿ» հիմնադրամի գնահատման մշակման և զարգացման բաժին, Ձևավորող գնահատման գործիքներ, https://kznakhimnadram.blogspot.com/2021/06/blog-post_15.html?fbclid=IwAR3cDc5zIU1doDO0mGjpdrzPg76OUS0bSL7C5D8DkxYqWUXjxml7ZkYEXhU, 25.09.23; 18:25
4. Банщикова Елена Владимировна, Влияние отметки и оценки на развитие личности школьника, https://www.lomonpansion.com/articles_2_3282.html, 24.09.23; 21:25
5. «ԿՁՆԱԿ» հիմնադրամի գնահատման մշակման և զարգացման բաժին, Թեստ. նպատակը, հատկորոշիչները, հայտորոշիչ թեստ, https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_37.html, 26.09.23; 20:15

6. «ԿԶՆԱԿ» հիմնադրամի գնահատման մշակման և զարգացման բաժին, Ձևավորող գնահատման գործիքներ (փոխադարձ գնահատում), https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_91.html, 24.09.23; 22:20
7. «ԿԶՆԱԿ» հիմնադրամի գնահատման մշակման և զարգացման բաժին, Հետադարձ կապ, https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_30.html, 23.09.23; 22:35
8. «ԿԶՆԱԿ» հիմնադրամի գնահատման մշակման և զարգացման բաժին, Գնահատում, ՆորՀՊՉ, https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_52.html, 23.09.23; 19:35

ՀԱՎԵԼՎԱԾ

Օրվա դասի պլան, V դասարան, անգլերեն

1. Դասի թեման	Topic 1. Hobbies.
2. Դասի նպատակները՝	• Ներմուծել հոբբի ունենալու կարևորության գաղափարը • Ընդլայնել սովորողների գիտելիքները թեմայի շուրջ • Ձևավորել ազատ ժամանակը ճիշտ տնօրինելու վերաբերմունք • Քննարկել նախասիրությունները
3. Դասի հիմնական խնդիրները	• կազմել նախադասություններ, խոսել տարբեր հոբբիների մասին • կիրառել նոր բառերը
4. Դասից ակնկալվող արդյունքները	• սովորողները կկարողանան լսել և հասկանալ հոբբիների մասին պարզ խոսքը • սովորողները կկարողանան մի քանի պարզ նախադասությամբ ներկայացել իրենց կամ ընտանիքի որևէ անդամի հոբբին
5. Լեզվական նյութը (բառապաշար, քերականություն, հնչյունաբանություն)	Hobby, activity, gardening photography, collection and so on
6. Բանավոր հաղորդակցությունը (ունկնդրել, խոսել)	• հարցեր տալ միմյանց, պատասխանել հարցերին՝ խոսքում կիրառելով նոր սովորած բառերը
7. Գրավոր հաղորդակցությունը (ընթերցել, գրել)	• ընթերցել Իզաբելի մասին կարճ տեքստը, կատարել վարժությունը
8. Դասագիրքը, բաժինը, այլ ձեռնարկներ	textbook English 5 by Amiraghyan et al
9. Ուսումնական այլ նյութեր	գրատախտակ, կավիճ
10. Ուսուցման, ուսումնառության հիմնական մեթոդները, առաջադրանքների տեսակները	զույգերով աշխատանք. Սովորողները պատմում են իրենց հոբբիների մասին, կազմում կարճ նախադասություններ
11. Տնային առաջադրանք, ինքնուրույն աշխատանք	p. 5, ex. 2

Օրվա դասի պլան, V դասարան, անգլերեն

1. Դասի թեման	Hobbies. Writing
2. Դասի նպատակները՝	• Ամփոփել թեմայի յուրացման ընթացքում սովորողների ձեռք բերած գիտելիքների մակարդակը • Ամրապնդել to like/to hate+verb+ing քերականական կառույցը
3. Դասի հիմնական խնդիրները	• կիրառել քերականական նյութը • կազմել քերականորեն ճիշտ նախադասություններ
4. Դասից ակնկալվող վերջնարդյունքները	Սովորողները կկարողանան • տարբերել ներկա անորոշ և ներկա շարունակական ժամանակաձևերը • կիրառել to like/to hate+verb+ing քերականական կառույցը • վերհիշել հոբբիները
5. Լեզվական նյութը (բառապաշար, քերականություն, հնչյունաբանություն)	Հոբբիներին վերաբերող բառապաշար Ներկա անորոշ և ներկա շարունակական
6. Բանավոր հաղորդակցությունը (ունկնդրել, խոսել)	_____
7. Գրավոր հաղորդակցությունը (ընթերցել, գրել)	Գրել ժամանակաձևերը
8. Դասագիրքը, բաժինը, այլ ձեռնարկներ	textbook English 5 by Amiraghyan et al
9. Ուսումնական այլ նյութեր	Գրիչ, բառատետր
10. Ուսուցման, ուսումնառության հիմնական մեթոդները, առաջադրանքների տեսակները	Ամփոփիչ թեստ
11. Տնային առաջադրանք, ինքնուրույն աշխատանք	Անցած նյութի կրկնություն

Օրվա դասի պլան, V դասարան, անգլերեն

1. Դասի թեման	Unit 1.2. How Ann helps the birds
2. Դասի նպատակները՝	• Ծանոթացնել նոր բառերին, կատարել նախընթերցանական վարժությունը • Ընդլայնել սովորողների գիտելիքները թեմայի շուրջ • Ստուգել՝ որքանով են ըմբռնել տեքստի գաղափարը • Զարգացնել թեմայի շրջանակում հարցերին պատասխանելու կարողությունը
3. Դասի հիմնական խնդիրները	• Բանավոր զրույց ծավալել թեմայի շուրջ • կիրառել նոր բառերը բանավոր խոսքում
4. Դասից ակնկալվող արդյունքները	Սովորողները կկարողանան • լսել և հասկանալ տեքստի միտքը • մի քանի պարզ նախադասությամբ ներկայացել նման մի պատմություն իր կյանքից • ծավալել քննարկում տեքստին հաջորդող հարցերի շուրջ
5. Լեզվական նյութը (բառապաշար, քերականություն, հնչյունաբանություն)	Bored, nest, branch, thin, comfortable
6. Բանավոր հաղորդակցությունը (ունկնդրել, խոսել)	• Հարցեր տալ միմյանց, պատասխանել հարցերին՝ խոսքում կիրառելով նոր սովորած բառերը
7. Գրավոր հաղորդակցությունը (ընթերցել, գրել)	• Ընթերցել տեքստը, սովորել անծանոթ բառերը, դրանք հոմանիշներն ու հականիշները
8. Դասագիրքը, բաժինը, այլ ձեռնարկներ	textbook English 5 by Amiraghyan et al
9. Ուսումնական այլ նյութեր	Գրատախտակ, կավիճ, տետր, բառատետր
10. Ուսուցման, ուսումնառության հիմնական մեթոդները, առաջադրանքների տեսակները	Ինքնագնահատման թեստ
11. Տնային առաջադրանք, ինքնուրույն աշխատանք	p. 29, ex. 1